



ՀԲԸՄ «ԿՈՐԻՉ» 2014 Թ. ՍԵՄԻՆԱՐԸ ՏԵՂԻ ԿՈՆԵՆԱ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

ՀԲԸՄ 6-րդ ամենամյա «Կորիզ» սեմինարը տեղի կունենա Թբիլիսիում, Վրաստան, 2014թ. –ի հոկտեմբերի 22-26-ը:

Այս տարի «Կորիզ» առաջնորդների ուսուցողական սեմինարը կանդրադառնա սփյուռքում բնակվող փոքրամասնությունների խնդիրներին և պետական մարմինների հետ նրանց փոխհարաբերություններին: Այն տեղի կունենա Վրաստանում, որտեղ ազգային փոքրամասնությունների մշակույթները բազմաթիվ են ու վառ արտահայտված:

2014թ.-ի «Կորիզ» սեմինարը կազմակերպվում է ՀԲԸՄ Եվրոպայի, «Հայարտուն» կազմակերպության (Թբիլիսի, Վաստան), Կովկասում ազգային փոքրամասնությունների խնդիրները համակարգող Եվրոպական կենտրոնի (Թբիլիսի), հրեա ուսանողների Եվրոպական միության և ERGO (Եվրոպական գնչուական ժողովրդական կազմակերպություն) կազմակերպությունների ցանցի հետ համատեղ, որոնցից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ փորձը կբերի ծրագրի շրջանակներում իրականացվելիք առաջնորդների վերապատրաստման ծրագրին:

Հասարակական քաղաքական ծրագրերի մեծ մասը հնարավորություն են ընձեռում մասնակիցներին որոշակիորեն ծանոթանալու հանրային ռեսուրսների հետ, ինչպես օրինակ՝ հանրային տարածքը, ծրագրի ֆինանսավորումը, լրատվամիջոցների հանդեպ ուշադրությունը, ինչպես նաև որևէ պետական պաշտոնյայի կողմից ստացած աջակցությունը կամ խորհուրդը: Կախված նրանից, թե ինչպես են կողմերը կազմավորվում և ինչ դերակատարություն են ունենում, առանցքային նշանակություն ունի, թե արդյոք պետական իշխանությունները կաջակցեն տվյալ ծրագրի իրականացմանը, թե ոչ:

Այս սեմինարի նպատակն է ուսումնասիրել ինքնության ճանաչման և հասարակական ներգրավվածության թեման և զարգացնել մասնակիցների հմտությունները ինքնության խնդիրներին կառուցողական վերաբերմունք ցուցաբերելու հարցում, որն ինքնին կդառնա նրանց ծրագրերի հաջողության գրավականը և կնպաստի հասարակական կյանքում նրանց լիարժեք դրսևորմանը:

Հրեական, գնչուական և հայկական համայնքների երիտասարդ ներկայացուցիչների ներկայությունը Եվրոպայում և Վրաստանում կայանալիք սեմինարի շրջանակներում տարբեր փոքրամասնությունների առաջնորդների միջև քննարկումները, կնպաստեն մասնակիցների միջև հսկայական փորձի փոխանակմանը:

Սեմինարի մասնակիցներն իրենց ներդրումը կունենան «Լավագույն փորձառության ուղեցույց» գրքույկի հրատարակչության գործում, որը կձառայի իբրև վկայակոչում և ներշնչման աղբյուր կառաջացնի ապագա ծրագրերի և նոր նախաձեռնությունների իրականացման գործում, ինչպես նաև միջոցառումից հետո արդեն իսկ ձեռք բերված փորձը կլուսաբանեն տարբեր լրատվամիջոցներով:

Դիմելու կարգը

Դիմումերի ընդունման վերջնաժամկետն է 2014թ.-ի հուլիսի 31-ը: Դիմորդները պետք է ուղարկեն իրենց դիմումաձևը և ինքնակենսագրականը contact@agbueurope.org էլ. հասցեով:

Ծրագրի մասին ավելի մանրամասն տեղեկանալու, ինչպես նաև գրանցման կարգին ծանոթանալու համար այցելեք <http://www.agbugoriz.org/eligibility/> ինտերնետային կայք:

Հավելյալ հարցերով կապ հաստատեք Նիկոլա Դավիթյանի հետ հետևյալ էլ. հասցեով՝ contact@agbueurope.eu